

4150

9(47.925)
v-30

1898

2004

6809


Дозволено цензурою. Тифлисъ, 16-го Февраля, 1898 г.

ՎՐԱՅՈՒ ՊՕՒՏ ԵԿԵԿԻՆ ՀԱՅՅԵՐԻ ՄԱՍԻՆ



C'est la profonde ignorance,
qui inspire le ton dogmatique.

(Միայն խորին տգիտութիւնն է
ներշնչում խօսելու ինքնահա-
ւատ վարդապետական եղանակ): La
Bruyère, *Les caractères* etc. V.



«Ակակիի ժողովածուի» յունուարի զրքում մի
յօդուած է տպագրուած «Արմենիա, Հայաստան և
Սօմխեթի անունների պատմական հետազօտութիւն»
վերնագրով: Այդ վերնագրին նայելով՝ յօդուածը պի-
տի լինէր պատմական, աշխարհագրութեան և ցեղա-
գրութեան մի ուսումնասիրութիւն՝ հանդերձ բառա-
գիտական ստուգաբանութեամբ. սակայն, իսկապէս,
դա մի խայտաբղէտ ժողովածու է, փափուկ խօսելով,
տարօրինակ զրախօսութեանց (журьевозвѣ): «Ակակիի



ժողովածուն» կամ ինչպէս նա անուանվում է վրացերէն «Ակակիս Գրեբուլի»-ն, որ հրատարակվում է անցեալ տարուան աշնանից, շատ համակերելի և բաւական բովանդակութիւն ունեցող հրատարակութիւն է, բայց այդ միայն բաւական չէ, ի հարկէ, թեթեամիտ յօդուածի վրայ ուշ դարձնելու համար: Միթէ քիչ անհեթեթ գրուածներ են երևում Անդրկովկասի անցեալի և մասնաւորապէս հայերի վերաբերմամբ տեղական և մայրաքաղաքի հանդէսների և լրագրների մէջ. երբեմն իսկ շատ լուրջ և յամենայն դէպս ազդեցիկ պարբերական հրատարակութեանց մէջ: Վերջին տարիներս մեր աշրի առաջ երեացին միմեանց ետեից մտնող շարք լրագրական և օրագրական նկատողութիւններ հայոց գրականութեան, պատմութեան և ազգութեան վերաբերմամբ և այդ նկատողութիւնները հետաքրքրական են միայն այն կողմից, որ առողջ դատողութեան և հայաստանի պատմութեան մասին տարրական գիտութեան կատարեալ բացակայութիւնը առաջադրվում էր իբրեւ գիտութեան վերջին խօսք... Մենք չունէինք և չունինք իսկ ոչ տրամադրութիւն և ոչ ժամանակ պըրպտելու հայագիտութեան դէմ եղած այդ բարբարոսական արշաւանքներն այն անձանց կողմից, որոնք կատարելապէս անմասն են մեր գիտութեան: Սակայն, եթէ մենք վճռեցինք զբաղուել Ակակիի յօդուածով, զրա միակ պատճառն այն է, որ մենք առանձին համակրանք են տածում դէպի վրաց այդ շնորհալի պօէտը և ոչ միայն նրա պօէզիայի սքանչելիքի ոճի, արտակարգ գիւրութեան, լեզուի հարստութեան և պօէտի այդ լեզուին վարպետաբար տիրապետութեան համար—պօէտի այդ յատկութիւնները ներկայ խնդրին չեն վերաբերում—այլ, մանաւանդ, նրա գրական ուղղութեան անկեղծութեան, շիտակութեան և անկախութեան պատճառով: Վրաց ժամանակակից գրականութեան մէջ Ակակին անշուշտ «աներկիւղ և նախատինքից վեր ասպետ է, ուստի և այդ իսկ պատճառով, ցաւալի է որ մենք նրա շրթունքներից ենք լսում շատ և շատ անարգար դատողութիւններ հայերի վերաբերմամբ: Մենք, հարկաւ, այստեղ ամենեւին մտադիր չենք պաշտպանել հայերին Ակակիի յաւակնութեան դէմ, որին հայերն, ամենայն հաւանականութեամբ, կրկնաբարեւուն կատարեալ անտարբերութեամբ: Նոյնպէս չենք մտածում Խոյեան դուրս գալ նրանց դէմ, որոնք փոխադարձ թշնամութիւն են սերմանում հայերի և վրացիների մէջ, կարծելով թէ այդ երկու ազգերի փոխադարձ ատելութեան վրայ կարելի է հիմնել Գովկասի բարօրութիւնը: Մեր համոզմունքն այն է, որ կոյր թշնամութիւնը և առհասարակ թշնամութիւնը ոչինչ չէ կառուցանում և առ հասարակ ոչ մի բարի հետեանք չէ արտադրում, իսկ ով այդ չէ տեսնում այսօր,—կըտեսնի վաղը: Բացի դրանից, մենք ոչինչ չէինք ասիլ, եթէ Ակակին դատապարտել այն հայերին, որոնք իր տեսութեան շրջագծի մէջ են ամփոփվում. գուցէ Գովկասում և մանաւանդ Թիֆլիզում հայերի և վրացիների յարաբերութիւնները այնպիսի կերպարանք են ստացել, որ վրացիի տեղիք չունի հային փաղաքշէտ, իսկ հայը տեղիք չունի վրացուն սիրելու: Դա բարեխեղճ յարաբերութեանց խնդիր է, իսկ այդ յարաբերութեանց հաստատելը կախուած է

րապետութեան համար—պօէտի այդ յատկութիւնները ներկայ խնդրին չեն վերաբերում—այլ, մանաւանդ, նրա գրական ուղղութեան անկեղծութեան, շիտակութեան և անկախութեան պատճառով: Վրաց ժամանակակից գրականութեան մէջ Ակակին անշուշտ «աներկիւղ և նախատինքից վեր ասպետ է, ուստի և այդ իսկ պատճառով, ցաւալի է որ մենք նրա շրթունքներից ենք լսում շատ և շատ անարգար դատողութիւններ հայերի վերաբերմամբ: Մենք, հարկաւ, այստեղ ամենեւին մտադիր չենք պաշտպանել հայերին Ակակիի յաւակնութեան դէմ, որին հայերն, ամենայն հաւանականութեամբ, կրկնաբարեւուն կատարեալ անտարբերութեամբ: Նոյնպէս չենք մտածում Խոյեան դուրս գալ նրանց դէմ, որոնք փոխադարձ թշնամութիւն են սերմանում հայերի և վրացիների մէջ, կարծելով թէ այդ երկու ազգերի փոխադարձ ատելութեան վրայ կարելի է հիմնել Գովկասի բարօրութիւնը: Մեր համոզմունքն այն է, որ կոյր թշնամութիւնը և առհասարակ թշնամութիւնը ոչինչ չէ կառուցանում և առ հասարակ ոչ մի բարի հետեանք չէ արտադրում, իսկ ով այդ չէ տեսնում այսօր,—կըտեսնի վաղը: Բացի դրանից, մենք ոչինչ չէինք ասիլ, եթէ Ակակին դատապարտել այն հայերին, որոնք իր տեսութեան շրջագծի մէջ են ամփոփվում. գուցէ Գովկասում և մանաւանդ Թիֆլիզում հայերի և վրացիների յարաբերութիւնները այնպիսի կերպարանք են ստացել, որ վրացիի տեղիք չունի հային փաղաքշէտ, իսկ հայը տեղիք չունի վրացուն սիրելու: Դա բարեխեղճ յարաբերութեանց խնդիր է, իսկ այդ յարաբերութեանց հաստատելը կախուած է

նոյն իսկ իրենց՝ հարևանների հասկացողութիւնից և բարի ցանկութիւնից: Բայց Ակակին իր դատողութիւնները պատճառաբանում է հայոց պատմութիւնից, հայոց գրականութիւնից և առ հասարակ հայկական կեանքից վերցրած փաստերով և ահա այդ փաստերը, որոնք Ակակիի հայերի մասին կազմած գաղափարի հիմքն են կազմում—ոչ մի կրետիկայի չեն դիմանում և պիտի գնահատուին ըստ արժանոյն. ինչ վերաբերում է Ակակիի բուն կարծիքին, մենք ամենևին ձգտում չունենք համոզել ումեկից նրա սեփական անհեթեթութիւնը հասկանալու. որովհետև շրջապատող կեանքը իւրաքանչիւր քայլում մեզ ուսուցանում է, որ մարդիկ շատ անգամ հաւանում են այս կամ այն կարծիքին, ոչ թէ այն պատճառով որ կարծիքը հիմնաւոր է, այլ այն պատճառով, որ յանուն կողմնակի հանգամանքների, նրանք ցանկանում են մի յայտնի կարծիքի հետեւ անպատճառ և երբեմն իսկ հակառակ առողջ դատողութեան:

Ակակին մասամբ հիմնվում է հայերի անցեալին վերաբերեալ մի պատմական ստուգութեան վրայ, որ պատկանում է «երիտասարդ վրացի գիտնականի» գրչին. բայց մենք կարծում ենք որ ինքը յարգելի պօէտն ևս այդ ստուգութեան վրայ նայում է իբրև տհաս խելքի արտադրութեան վրայ և նրան առանձին նշանակութիւն չէ տալիս: Ստուգութիւնը քաղուածական ընաւորութիւն ունի և մերկացնում է հեղինակի վայր ի վերոյ ծանօթութիւնը մի քանի արեւելագէտների գրուածների հետ և անսեղեակութիւնը հայագիտութեան. ստուգութիւնը գրուած է ոչ առանց կոռուսիրութեան, որ յատուկ է այն-

պիտի «համարձակ գիտնականներին», որոնք չեն ծանրաբեռնուած գիտութիւններով:

«Երիտասարդ գիտնականի» ստուգութեան մէջ միայն ինքնուրոյն է այն կարծիքը, թէ «այժմեան հայերը չունին ոչ մի ազգային անուն և չեն ունեցել ոչ մի ազգային պատմութիւն՝ մինչև հայոց եկեղեցու օրթօդօքս եկեղեցուց բաժանուելը», իսկ հայ պատմաբանների հաղորդածները հայկական հնագոյն ժամանակների մասին միայն հէքիաթներ են «(երես 49): Սակայն այդ կարծիքի մէջ ևս ոչինչ նորութիւն չկայ. այդ—ինչպէս անենք որ մեղմ լինինք խօսած—միամիտ հայեացքը, այս կամ այն չափով դուրս է պրծել այն պատահական հեղինակների մեծամասնութեան գրչի տակից, որոնք ձեռնամուխ են եղել գրելու Հայաստանի մասին: Եթէ խօսքը միայն այն մասին լինէր, թէ հին հայկական պատմագրութեանց մէջ հայոց պատմութեան սկզբնական դարագլուխը ներկայացրած է առասպելախառն (իսկ, ասացէք խնդրեմ, այդ ո՞ր հին ազգերի պատմութեան սկիզբը չէ շողախուած առասպելական փաստերով), եթէ մեզ ցանկանային ներշնչել թէ հայոց պատմագրների փաստերից, ինչպէս և ամեն պատմագրների փաստերից, չէ կարելի օգտուել առանց կրիտիքական ստուգութեան, ի հարկէ մենք ոչինչ չէինք ունենալ հակաճառելու: Մենք միայն գուցէ նկատելինք թէ «վրացի երիտասարդ գիտնականը» և նրա յարգելի համախոհը ուշացել են: Հայկական աղբիւրների դէմ բացասական կրիտիկան ընդհանրապէս հսկայական քայլեր է արել շնորհիւ, մասամբ, եւրոպացի գիտնականների երկերի (յայտնի պատմագիր

Gutshmid-ի, պրօֆ. Baumgartner-ի, պրօֆ. Carrière-ի և այլոց) և մեծ մասամբ հայ գիտնականներին (պրօֆ. Պատկանեանի, գիտնական հայր Տաշեանի, պատմագիր Գարագաշեանի, Էջմիածնի միաբան գիտնական հ. Գալուստ սարկաւազի, պրօֆ. Խալաթեանի և այլոց), և բացասական ուղղութեամբ այդ ոգևորութիւնը, որ աճում էր crescendo, այժմ աւելի կարօտ է մեղմացման ոգուն, քան քաջալերութեան: Սակայն, բոլոր այդ գիտնականները, չխօսելով այլ ուղղութեան մասնագէտների մասին, խիստ քննադատութեան ենթարկելով հայկական աղբիւրների փաստերը, ներկայանում են ոչ թէ ուրացողներ հայկական ազգային պատմութեան, այլ, ընդհակառակն, օժանդակում են որ նա հիմնուի աւելի գիտնական փաստերի վրայ: Ի հարկէ, շատ ցաւալի է, որ այսպիսի մի տարրական ճշմարտութիւնը չէ իւրացրել վրաց ինտելիգենտ շրջանը, բայց խոստովանում ենք, որ այդ երեւոյթի մէջ զուարճալի տարրեր կան. որովհետեւ հայոց ազգային պատմութեան, հետեւաբար և հայկական քաղաքակրթութեան ուրացումը, եթէ ոչ աւելի, գէթ կիսով չափ ուրացումն է վրաց քաղաքակրթութեան:

Ամենահին ժամանակամիջոցում և անընդհատ մինչև X-րորդ դարը Քրիստոսի ծննդից յետոյ, վրաց գրականութիւնը պտնուել է հայ գրականութեան զգալի ազդեցութեան տակ. բաւական է ասել որ վրաց լեզուով Աստուածաշնչի առաջին գրքերի թարգմանութիւնները կատարուել են հայերէն լեզուից և այդ ապացուցանում են ոչ թէ հայերը, այլ այն գիտնականները, որոնք բոլորովին անտարբեր են հայ-

վրացական հակաճառութիւններին: Վրաց եկեղեցական գիրը, որի տուողը գուցէ հայ Մեսրոպը չէ (այժմեան հայագիտութիւնը չէ ցանկանում պնդել այդ, ինչպէս կարծում է Ակակին, երես 56) բայց, անկասկած, կազմուած է ըստ օրինակի հայկական այբուբենի և ըստ էութեան՝ հայ պատմագրների հաղորդուածն ամենեին չէ հակասում ճշմարտութեան: Եթէ Վրաստանի քրիստոնէական քաղաքակրթութեան այնպիսի հիմնական գործօններն, ինչպիսիք են եկեղեցական գիրը և սուրբ գիրը, վրացիք ստացել են հայերից, կարելի է գաղափար կազմել թէ որքան մեծ էր հայկական հին լուսաւորութեան ազդեցութիւնը հին վրացիների վրայ և այն էլ ճիշտ այն ժամանակ, երբ հայկական եկեղեցին ընդհանրական եկեղեցու հետ նոյն կեանքով էր ապրում: Միթէ զուարճալի չէ՞ սրանից յետոյ տեսնել թէ ինչպէս վրացին ինքնագոհութեամբ հաղորդում է թէ հայերը մինչև օրթօգօրսութիւնից բաժանուելը, չեն ունեցել իրենց ազգային քաղաքակրթական կեանքը: Ապաքէն եթէ հայերը աղբաշին քաղաքակրթութիւն չունէին մինչև վերոյիշեալ ժամանակը, ուրեմն վրացիք, որ այդ ժամանակամիջոցում հայերից էին ստանում լուսաւորութիւնը, բոլորովին ոչինչ չունէին. բայց մենք ի հարկէ այդպէս չենք մտածում *): Ակակին հայ-

*) Խօսելով հայկական և վրաց քաղաքակրթութեանց մասին, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մենք դեռ ոչինչ չենք խօսում նրանց բացարձակ նշանակութեան մասին: Դիտութեան համար քաղաքակրթական երեւոյթների արժէքը նրանց կշռի և չափի մէջ չէ, այլ այն շահի մէջ, որ բացատրում է նրանց կեանքի շարժման-յառաջադրման ընթացքը:



րի գէպի վրացիները գիտակցաբար տածած թշնամութեան ապացոյցներից մին համարում է (երես 38) «Դուինի ժողովի վճիռը 596 թուականին», որով հայերին արգելվում էր որևէ յարաբերութիւն ունենալ վրացիների հետ, բացի առևտրից:

Կարելի է ցոյց տալ գէպը, երբ վրաց եկեղեցւոյ վեհապետները նոյնպիսի և դեռ աւելի մեծ մոլեռանդութեամբ են վերաբերուել հայերին, իբրև այլադաւանների, այլ և սրբապղծութեամբ են վերաբերուել գէպի քրիստոնէութեան սրբութիւնը: Կարծեմ բաւական կրինի յիշել այն զգուելի տեսարանը որ նկարագրուած է *վրաց տարեգրութեանց մէջ* այն վէճի առթիւ, թէ ո՞ր կրօնն է աւելի լաւ— հայոցը թէ՞ վրացը: Մենք ամաշում ենք այստեղ առաջ բերել վրացի պատմագրի այդ հաղորդած գէպը (տես վրացերէն բնագիրը, հրատարակութիւն գիտութեանց ճեմարանի, մասն I, երես 314—315, այլ և, Ֆրանսերէն թարգմ Brosset I, երես 452—454): Բայց մեզ զբաղեցնում է այն, թէ ինչպէս Ակակիի նման մի ծայրայեղ-աշխարհական գրողը, ապացուցանելու համար, որ իբր թէ, գէպի վրացիները թշնամի լինել հայոց ազգի սրբազան օրէնքն է, մասնացոյց է անում այն եկեղեցական արգելման վրայ որ հետեւանք է հոգևոր գասակարգի և այն էլ նրա մի մասի մոլեռանդութեան կրքերի արքղութեան. բացի զբանից, Ակակիի առաջ բերած արգելման խմբագրութիւնը պատկանում է ոչ թէ Դուինի ժողովին, ինչպէս կարծում է պօէտը, այլ Աբրահամ Կաթողիկոսի շրջաբերականին (տես Մովսէս Ուտիացի, Մոսկվայում հրատարակուած 1860, երես 215, Ուտտանէս, էջ-

միածին հրատարակուած 1871, երես 130—136) *):

Ոչ որ, ի հարկէ, չէ ուրանում, որ հայոց եկեղեցին հաւատալով իր վարդապետութեան անսխալականութեան, եռանդազին պաշտպանում էր իր դաւակնելին այն վարդապետութիւններից, որոնք նրան մոլորութիւն էին թւում, և պաշտպանելով իր անկախ գոյութիւնը, ժողովների վճիռներով մրցում էր իւր հեղինակութիւնն ուրացողների դէմ. բայց այդ երևոյթն ընդհանուր է եկեղեցիների փոխադարձ յարաբերութեան մէջ, մինչև անգամ այն ժամանակ, երբ եկեղեցիներին ոչ մի վտանգ չէ սպառնում: Հազիւ

*) Ակակին առանձին ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ երբ հայերին արգելվում էր որևէ յարաբերութիւն ունենալ վրացիների հետ, միևնոյն ժամանակ թոյլ էր տրվում առևտուր անել, ինչպէս հրէաների հետ. բայց եթէ այդ կէտն առանձնապէս յուշում է Ակակին ուրեմն թող նա իմանայ որ նայելով Յովհաննէս Կաթողիկոսի պատմութեան (Մոսկ. տպագր. 1853, երես 42) հայոց եկեղեցու հայրերը Դուինի ժողովում արգելեցին հայերին նաև առևտրական սակարկութիւններ անելը վրացիների հետ: Բայց ի՞նչ է ցոյց տալիս այդ ամենը. այն, որ մինչև այդ ժամանակ միասին եղած հայ-վրացական եկեղեցու հոգևոր ղեկավարները բաժանուել էին երկու բանակների, որոնց յարաբերութիւնները չափազանց լարուած էին և երկու կողմերն ևս *միատեսակ* օժանդակում էին այդ լարման սաստկանալուն, նախանձախնդիր լինելով հաւատի մաքրութեան: Այո, դրանից աւելի ոչինչ: Այն ժամանակ Հայաստանում կեանքն այնպէս միակողմանի—եկեղեցական չէր որ նրա յարաբերութիւնները գէպի զրացիները որոշուէին եկեղեցական նշանակութիւն ունեցող այդպիսի բացառիկ յօդուածներով: Իսկ յետոյ այդ յօդուածներն այնչափ հիմնովին մոռացուեցան, որ հարկ է լինում քրքրել փնտռել նրանց տարեգրութեանց մէջ, իբրև հնագիտական նիւթ:

Ծան. Հեղ.

թէ ապացոյցի կարօտ լինէր և այն, թէ «Գուրնի ժողովի» սահմանած արգելմունքը ըստական գրգռման «ըզիւնը էր և երբէք կենսական նշանակութիւն չէ ստացել: Խնդրի վրայ այսպիսի կանոնադր կարծիք և աչն էլ պատճառաբանեալ կարծիք կայ նոյն իսկ վրաց գրականութեան մէջ (Թ. Ժորդանիա, *Ժամանակագրութիւններ* ևայլն, վրացերէն լեզուով, Թիֆլիս, 1893, էրես 313) Գուցէ Ակակին ղեռ ժամանակ չէ ունեցել պ. Ժորդանիայի աշխատութիւնը կարգաւոր, բայց պէտք է ենթադրել որ նա կ'սրբացել է Գ. Զ. Բակրաձէի բրօշուրը «*Արտօքնատր Պատկանեան եւ վրաց պատմութեան աղբիւրները*» (վրաց լեզուով, Թիֆլիս 1884), որտեղից էր. 6.) և ինչպէս երևում է, վերցրած է նրա առաջ բերած «Գուրնի ժողովի» որոշմունքը. և հետեւեալ Ակակին գիտէ որ վրացի հանգուցեալ պատմաբանը ևս այդ փաստաթղթին չէ տալիս ընդհանուր-հայկական բնատրութիւն, որովհետեւ դրա այդպիսի նշանակութեան գէտ են *անվիճելի փաստերը* (էրես 6 7)

Յետագայում մենք կէտ առ կէտ կըզիտենք մեր քննած յօդուածի բոլորը կէտերը, որոնք հակաճառութեան են հանդիպում մեր կողմից և իւրաքանչիւր անգամ նախապէս առաջ կըբերենք Ակակի խօսքերը:

1) «Եթէ հայոց պատմութեանը նայենք, վրաց ինքնուրոյնութիւնը ոչ մի ժամանակամիջոցում արժանի չէ յիշատակի» (էրես 36):

Տասնևերեք տարի է որ մենք կարդում ենք հայերէն, ահա արդէն ինն տարի է որ ուսումնասիրում ենք հայ հեղինակներին, իբրև մասնագէտ,

բայց և ոչ մի հայ պատմագրի, ոչ մի հայ հեղինակի գրութեամբ չենք պատահել և ոչ մի տեղ, ուր վրաց ինքնուրոյնութիւնը ենթարկուէր այդպիսի ծայրայեղ կասկածի կամ ծաղրի: Ընդհակառակն, եթէ հայ հեղինակները չլինէին, վրաց անցեալի մեծ մասը յաւիտենանս կըմնար ծածկուած անթափանցելի խաւարով: Վրաց թագաւորների արժանաւորութեանց, վրաց իշխանների սխրագործութեանց մասին խօսում են ոչ միայն հայ պատմագրերը, այլ և խօսվում է հայ ձեռագրն ըր յաւելուածների և ծանօթութեանց մէջ: *) Սա՛ վիտութեան մէջ արդէն վաղուց ընդունուած փաստ է և եթէ դա ժամանակակից վրաց հասարակութեան մէջ չէ գնահատուած ըստ արժանւոյն, դրա յանցանքը ոչ թէ հայկական նիւթերի անպէտքութիւնն է վրաց պատմութեան համար, այլ վրաց անծանօթութիւնը հին-հայկական գրականութեան և մասամբ՝ գէպի ամեն մի հայկականը եղած

*) Ընթերցողներին գուցէ յայտնի չէ որ Եւրոպայում գէպի վրաց պատմական յիշատակաբանները բուն գիտնական շահագրգռութիւն ծագելը և մինչև այժմ իր նմանը չունեցած բազմաշխատ վրացագէտ M. Brosset-ի երևան գալը տեղի ունեցաւ մասամբ հայկական աղբիւրների շնորհիւ, որոնք նիւթ են բովանդակում վրաց պատմութեան վերաբերմամբ: Մենք այդ խնդրի առթիւ առաջ կըբերենք մի կտոր արդէն վերև յիշած վրացի Գ. Զ. Բագրաձէի, վրացերէն բրօշուրից (էրես 1—2) և պ. Բագրաձէի կարծիքը, ներկայ գէպում, առանձին կըթական նշանակութիւն կունենայ վրացիների համար. — «Երբ 1822 թուականին Փարիզում հիմնուեց Ասիական ընկերութիւնը, նրա անդամներից մին, մեծանուն Ս.— Մարտէնը համոզեց յիշեալ ընկերութեանը, թէ Վրաստան այն քան էլ աղքատ չէ պատմական յիշատակներով, ինչպէս կըբ-

այն թշնամական տրամադրութիւնը, որ հիմնուած նոյն իսկ այդ անգիտութեան վրայ: Եթէ մի բան էլ զիտեն ժամանակակից վրացիները հայկական աղբիւրների մասին, վրաց պատմութեան վերաբերմամբ, դրանք էլ բացառապէս երկու երեք մասնագէտներ են և գիտեն միայն երկրորդ ձեռքից—այն է հանգուցեալ աղագեմիկոս Բրոսսէի գրուածներէից:

Ի հարկէ չէ կարելի սպասել, որ հայոց տարեգրութիւնները վրաց տեսակէտով լինին գրուած. նրանց մէջ ոչ ամենն այնպէս է պատմվում, ինչպէս վրաց տարեգրութեանց մէջ: Հայ պատմագրները միատեսակ անաշուտութեամբ պատմում են վրաց թէ փառաւոր և թէ ոչ փառաւոր գործերի մասին. բայց հէնց իսկ դրա մէջն է հայ աղբիւրների արժանաւորութիւնը. իսկ եթէ երբեմն հայկական տեսակէտը—որ կատարելապէս տեղին է հայկական գրականութեան յիշատակարանների մէջ—թանձրացնում է տեղ տեղ գոյները, գուցէ և ճիշդ չէ լուսարանում փառ-

ծում են և թէ այդ յիշատակարանների հրատարակութիւնը լոյս կըսփռէ Արեւելի անցեալ կեանքի վրայ: Ս.-Մարտէնը այդ միտքը հիմնում էր եւրոպական գիտութեան մէջ եղած հատուկոր տեղեկութիւնների և մանաւանդ հայկական յիշատակարանների տեղեկութիւնների վրայ, իսկ հայկական յիշատակարանները նա ուսումնասիրել էր ամենայն կատարելութեամբ: Ս.-Մարտէնի առաջարկութեամբ Ասիական ընկերութեան անդամներից հինգ հոգի եռանգազին ձեռնամուխ եղան Վրաստանի պատմութեան ուսումնասիրութեան. բայց դժբախտաբար նրանցից մեծ մասը շուտով մեռան, ողջ մնաց միայն Մարի Բրոսսէն որ իր գործունէութիւնը մեր (վրաց) պատմագրութեան վերաբերմամբ 1837 թուին Փարիզից փոխադրեց *Պետերբուրգ*: Ծան. Հեղ.

տերը, ապաքէն դրա համար կան յայտնի լեզուարանական կարգապահութիւններ—պատմական կրիտիկան, բնագրների քննադատութիւնը և այլն, որոնք ըստ արժանւոյն գնահատում են աղբիւրները իսկ հայկական գրական յիշատակարանները քննադատութիւնից չեն վախենում, միայն թէ այդ կրիտիկան, այդ քննադատութիւնը լինի բուն գիտնական:

2) Եթէ հաւատանք հայոց պատմութեան, դուրս է գալիս, որ լեզուն էլ մեզ հայերն են պարգեւել» (երես 36): Հայ պատմագրների գրուածների մէջ մենք ոչ մի այդպիսի բան չենք գտնում: Գուցէ հայերը վրացիների լեզու են պարգեւել ասելով պէտք է հասկանալ այն, որ մի «տարեգրողի» հալոյդածին նայելով վրացիք սկզբում խօսում էին հայերէն լեզուով: Բայց այդ տեղեկութիւնն էլ միայն վրաց տարեգրութեանց մէջ կայ գրուած (վրացերէն բռնագիր, հրատ. Գիտութ. ճեմարանի, հատ. I. երես 25 և 26, նոյնը—Ֆրանսերէն թարգմ. Brosset, հատ. I, երես 31 և 32). և եթէ հայ գրականութեան մէջ այդպիսի մի տեղեկութեան հանդիպէք, այդ տեղեկութիւնն էլ թարգմանուած է վրացերէն յիշատակարանից (վրաց պատմութիւն, հայերէն թարգմ. Վենետիկ, 1884, երես 17 և 18, նոյնը—Ֆրանսերէն թարգմ. Brosset, *Additions et Eclaircissement*, 1851, երես 6):

3) «Միթէ երէկ չէր—ասում է Ակակին—որ նրանց (հայերի) գիտնական—Պատկանեանը ապացուցանում էր, թէ վրացիք պատմութիւն չեն ունեցել, թէ վրացիք այդ պատմութիւնը շարադրել են միայն XV—րդ դարում, Վախթանգի օրով և այն

էլ հայկական հէքեաթի հիման վրայ», (երես 16):

Եթէ Ակակին ցանկանար ասել որ Պետերբուրգի հաժախարանի հանգուցեալ պրօֆեսսորը, ռուսական դիտնական, ծագմամբ հայ Պատկանեանն առաջին անգամ լուրջ գիտնական կրիտիկայի ենթարկեց Վրաց տարեգրութիւնները, ցոյց տուաւ այդ յիշատակագրի մէջ ահագին անախրօնիզմներ, բացատրեց մի շարք փաստերի անգործութիւնը, որոնք հիմնուած են անկասկած վիպական եղանակի վրայ, որ իրեն լաւ ծանօթ է հայ պատմագրներէից, մասամբ ենթադրութիւնների վրայ և մասամբ օտար հերոսների սխրագործութիւնները «վրացիացնելու» վրայ ու ակներև կերպով ապացուցեց, որ Վրաց տարեգրութիւնները այն ձևով ինչ ձևով գոյութիւն ունէին իր օրերում, յայտնի են միայն հերոսական գիտութեանը և յամենայն դէպս արտագրութիւն են XVIII-րդ դարի և թէ բացառապէս հայկական թարգմանութեամբ եղած աւելի հին խմբագրութիւնը հազիւ թէ XI-րդ դարից աւելի հին լինի, կրկնում ենք— եթէ Ակակին ի նկատի ունենար մատնացոյց անել հանգուցեալ հայագէտի այս ծառայութիւնները, այն ժամանակ, մեզ այլ ևս խօսելու տեղիք չէր մնալ: Նկատելով այստեղ, որ վրաց պատմութեան նախնական ժամանակամիջոցի առասպելական բնաւորութիւն ունենալու միտքը հարևանցի կերպով Պատկանեանից առաջ արտայայտել է վրացի Բագրատէն *),

*) Ահա վրաց հանգուցեալ պատմագրի իսկական խօսքերը. «Վրաստանի նախնական ժամանակներին վերաբերեալ աղբիւրները շատ աղքատիկ են և եղածներն էլ առասպելական բնաւորութիւն ունին» (Բագրատէն, ОБЪ НЕТОЧНИКАХЪ

մենք միայն կրաւելացնէինք թէ ինչպէս հանգուցեալ պրօֆեսսորի աշակերտ հպարտութեամբ ընդունում ենք որ նա կատարել է այդ ծառայութիւնը գիտութեան առաջ և բացի դրանից անձնապէս հետաքրքրուելով գիտնական վրացագիտութեամբ, *) մենք դէպի նրա յիշատակն առանձին երախտագիտութիւն ենք տաժում այդ յօդուածի համար, որովհետև այդ յօդուածը կենդանացրաւ միտքը վրաց գիտնական գրականութեան մէջ, իթան եղաւ վրաց պատմութեան աղբիւրների լրջօրէն մշակելուն և միջի այլոց նպաստեց որ լոյս աշխարհ գան վրաց ամենահին խմբագրութեամբ տարեգրութիւնները, որոնք էապէս, հիանալի կերպով հաստատում են Բ. Պ. Պատկանեանի հիմնական մտքերը **):

грузинской исторіи, Кавказск. Календарь, 1858 թուին, Թիֆլիս 1857, երես 405): Աւելի վերջին աշխատութեանց մէջ ևս Բագրատէն ամենեւին չէ հերքում այդ փաստը, այլ վերագրում է անբարեյաջող հանգամանքներին: Ի դէպ, կարելի է նկատել, որ իր գիտնական երկերի մէջ, այդ կոչմամբ գիտնականը զարմանալի ուղղամտութեամբ էր վերաբերվում հայերի վրաց վրայ աղբիւր խնդրին. մինչև անգամ Բ. Պատկանեանի յօդուածի դէմ գրած նրա շատ հետաքրքրական ցուցմունքներով ի հակաճառութեանց մէջ—թէ և նրանք ըստ էութեան չեն ներկայանում իբր պատասխան նրա արժէք ունեցող մատերի—տիրապետում է խելացի վերաբերութիւն դէպի խնդիրը, թէ և այդ ինքնապաշտպանողական բնաւորութիւն կրող հակաճառութեան մէջ երբեմն խանգարվում էր գիտնականի հանգաբո տօնը և տեղ տեղ լսվում էր ազգային-հայրենասիրական զգացման վրդովմունքի ձայնը:

*) Դուրս է գալիս որ դեռ ազգային-հայրենասիրական վրացագիտութիւն ևս կայ, առանձին «գիտնական» վիճելու եղանակներով:

**) Բ. Պ. Պատկանեանի աշխատութեան մի մասի հա-

1005
9-1937



Բայց Ակակին իր ընթերցողներին մի բոլորովին այլ բան է ներշնչում. նրա ասելով, Պատկանեան «հայ գիտնական» է և իբրև հայ՝ դիտմամբ դրժում էր և անուանարկում վրաց անցեալը: Սակայն այդ այդպէս չէ: Մենք արդարամիտ կըլինենք և կըխոստովանենք որ արժանաւոր մեծ համբաւ վայելող գիտնականի յիշատակին արտայայտուած այդ աններելի քսութիւնը Ակակին չէ պատկանում. այդ քսութիւնը վաղուց է պտտում վրաց ինտիլիգենտ շրջանի մի մասի մէջ և ճարպկութեամբ թագնվում է մի քանի վրացիների quasi—գիտնական աշխատութեանց մէջ. բայց մենք իրաւունք ունենք սպասելու, որ վրաց քանքարաւոր պօէտը, որ այնքան հաստատաքայլ և անկախօրէն գնում է իր ճանապարհով, կըզարշի քսութիւնը կրկնելուց, առանց նրան ստուգելու. աւելի քիչ կարող էինք սպասել, որ իր ազգի այնպիսի անկեղծ մարգարէն, ինչպիսին է Ակակին՝ գոգծին անգիտակութիւնից ծնած այդպիսի լուրերը կըգնէ իբրև հիմք իր դատողութեան մի ամբողջ ազգի մասին, թէ և փոքր ազգի:

Բարերար նշանակութիւնն այն գիտնական կրիտիկայի, որին ենթարկեց Պատկանեանը *Վրաց տա-*

մար մեր ասածից հարկ չկայ ամենին հետեցնելու թէ այդ աշխատութիւնն ըստ ամենայնի անսխալական է, Պատկանեանը վրացագիտութեան մէջ մասնագէտ չլինելով չէր կարող խուսափել մի քանի շեղումներից մանրամասնութեանց մէջ: Բացի դրանից, այժմ նրա մի քանի ձևերը կարող էին հնացած համարուել, բայց այդ էլ արդէն ոչ մի կապ չունի այն վրացատեցութեան հետ, որ նրա շնորհն են փաթաթում:

Ծան. Հեղ.

րեզրուլթիւնները, ի հարկէ, վաղ թէ ուշ աւելի լայն կըհասկացուի նաև վրաց շրջանում: Սակայն կարող են կարծել, թէ վրացագիտութեան համար բարերար այդ գիտնական կրիտիկայի մէջ Պատկանեանի բացասական վերաբերութիւնը դէպի *Վրաց տարեգրութիւնները* բացատրվում է նրա, իբրև հայի ատելութեամբ դէպի ամենն, ինչ որ վրացական է, թէ նա դրանով ցանկանում է ստորացնել վրացիներին կըթուած հառարակութեան աչքում, թէ նոյն Պատկանեանը հայկական յիշատակները կրիտիկայի ենթարկելիս, խուսափել է բացասական վերաբերութիւնից: Բայց հէնց բանն էլ այդ է, որ չը նայելով հայ լինելուն, գիտնական Պատկանեանը միօրինակ անխնայ էր պատմական յիշատակարանները կրիտիկայի ենթարկելիս, պատկանէին այդ յիշատակարանները վրացիներին թէ հայերին—այդ միևնույնն էր նրա համար: Բաւական է ասել, որ Մովսէս Խորենացուն, այդ հայկական գրականութեան պարծանքին գնահատելիս՝ «հայ գիտնական» Պատկանեանը աւելի անխնայաբար է անում իր բացասական եզրակացութիւնները, քան *Վրաց տարեգրութիւնները* գնահատելիս:

4) «Միթէ նրանց (հայերի) զրդմամբ չէր, որ Գրէնը հրապարակով արտայայտեց, թէ թագուհի Թամարը գահ բարձրացաւ հայերի և օսերի ինտրիգներով. իսկ վրացիներն այն ժամանակ, XII-րդ դարում ներկայացնում էին մի խելաղուրդ ամբոյս և ոչ մի նշանակութիւն չունէին (երես 36):

Մեզ շատ անգամ պատահել է տեսնել, որ վրաց գրականութեան մէջ միմեանց կողքի են դնում պ.



Գրէնին և Ք. Պ. Պատկանեանին: Մեր գիտութեան մէջ Գրէնի ունեցած նշանակութեան մասին մինք կարող ենք լռել: Այս լռակէին հարցը նրանումն է, թէ ինչ ճանապարհով է Ակակին խելամուտ եղել, որ պ. Գրէնը արտայայտելով իր վերոյիշեալ միտքը Թամարի թագաւորելու մասին՝ գործում էր հայերի զրգմամբ: Ի՞նչ մի գովական բան կարող էին գտնել հայերը նրա մէջ, որ ցոյց տան թէ իրենց նախնիքը վրաց արքունիքում ինտրիգաններ էին: Եթէ այն իսկ ենթադրենք, որ դա գովական է, որեւէ մէկի համար, այնուամենայնիւ պ. Գրէնի արտայայտած մտքի մէջ չկայ այնպիսի մի բան, որ ցոյց տար, թէ այդտեղ հայերը մի բացառիկ դեր են խաղացել: Ակակի խօսքերից դատելով, պ. Գրէնը Թամարի թագաւորելը բացատրում էր հայերի և օսերի ինտրիգներով. և եթէ այդ հիման վրայ մեղադրենք իբրև զրգայնների, ուրեմն այդ մեղադրութիւնը պիտի վերաբերէ նաև օսերին և այդ դէպքում կը նշանակէ, որ պ. Գրէնը Ակակին հետաքրքրող կարծիքն արտայայտել է օսերի և հայերի զրգմամբ!!: Սենք չենք իմանում, թէ ինչպիսի «օսական ներշնչումներ» կարող էին այդտեղ գործել, բայց Գրէնի վերաբերմամբ «հայերի զրգման» մասին կարելի է խօսել միայն կատարելապէս անծանօթ լինելով հայ գրականութեան, ուր եթէ պատահում էք որեւէ տեղեկութեան Գրէնի գիտնական աշտատութեանց մասին («Արձագանք», 1893, № 148), այդ տեղեկութիւնն ամենւին չէ վկայում թէ հայերը հետաքրքրուել են Գրէնի կարծիքով հայերի պատմական նշանակութեան մասին, ուր որ էլ լինի, թէկուզ նոյն իսկ Վրաստանում:

Եւ վերջապէս, միթէ Ակակին չէ՞ հասկանում, որ երբ ամենքից պաճանջում է բացառապէս իր դաւանած հայեացքներն ընդունել հայերի անցեալի վերաբերմամբ և չընդունողներին սպառնում է անուանարկութիւններով, նա նոյն իսկ զրանով, առանց այն ևս քիչ լուսաւորուած ժողովրդի մէջ՝ զրգում է հսկածանք մտքի ազատութեան դէմ: Կամ չլինի թէ Ակակին վտանգ է զգում թէ իր շուրջը ափրում է շափազանց շատ մտքի ազատութիւն և փոխադարձ համբերատարութիւն...

5) «Միթէ հայոց լրագրները և հանդէսները չեն, որ ապացուցանում են իբր թէ վրաց լեզուն այնքան աղքատ է, որ այդ լեզուով չէ կարելի բարդ մտքեր արտայայտել, և իբր թէ վրացիք նոյն իսկ բառերը վերցրել են հայոց լեզուից, մինչդեռ բոլորովին ուրիշ բան են ասում եւրոպական գիտնականները (?) և նրանց թւում նոյն իսկ նրանց (հայերի) աչքում հեղինակութիւն համարուած պ. Գառնիբաս, որի կարծիքով հայոց լեզուն չէ կարելի իսկ ուսումնասիրել առանց վրաց լեզուի օգնութեան» (եր. 36):

Հարկաւ «հայոց լրագրները և հանդէսները» առւած է աւելի մեծ էֆէկտ գործելու համար. հայոց լրագրներում և հանդէսներում, ինչպէս և բոլոր աշխարհի մամուլի մէջ զրգում են և՛ խելացի և՛ անտեղի յօդու ծներ. առաջիններն առ հասարակ պատկանում են լուրջ հեղինակներին, իսկ երկրորդները — թեթեամիտներին. բայց մենք երբէք չենք հանդիպել հայ մամուլի էջերում այն մտքով յարձակումներ վրաց լեզուի դէմ, իբր թէ մարդավարի կերպով չէ կարելի միտք արտայայտել վրաց լեզուով: Ընդհա-

կառավար, դատելով այն ամենից, ինչ որ մենք առիթ ենք ունեցել կարգալ հայ գրականութեան մէջ վրաց լեզուի և վրացիների վերաբերմամբ, մենք դրականապէս կարող ենք պնդել, որ ոչ մի հայ լուրջ հեղինակ իրեն թոյլ չի տալ վրացիների մասին գրել անբարե և վայրենի բաներ, որքան արտայայտուած է հայերի մասին վրաց առաջնակարգ հեղինակ Ակակիի յօդուածի մէջ:

Հարկ չկար հայ լրագրներին և ամսագրներին ապացուցանել, որ վրացիք հայոց լեզուից բառեր են վերցրել. դա մի փաստ է արդէն, որի գիտի պատիւը հայերին չէ պատկանում. թէ վրաց լեզուի մէջ հայկական բառեր կան, այդ դեռ ընդունել և ցոյց են տուել այնպիսի վրացիք, ինչպէս XVIII-րդ դարի հեղինակ Սարա-Սուլիան Օրբելեանին և բառագիր XIX-րդ դարի Դ. Ի. Չուբինով: Կասկած չկայ, որ հայոց լեզուի ազդեցութիւնը վրաց լեզուի վրայ աւելի ուժեղ է եղել և այդ ուժեղութեան չափն առ այժմ դեռ բոլորովին չէ որոշուած և վրացիք պիտի շատ շնորհակալ լինէին հայոց լրագրներից և հանդէսներից, եթէ միայն նրանք յիշեալ երեւոյթը լուսաբանէին աւելի ընդարձակօրէն, ինչպէս ներշնչուած է Ակակին. բայց դժբաղդաբար այդպիսի բան դեռ չէ եղած: Ոչինչ չկայ անարգական, եթէ վրաց լեզուի մէջ մտնեն շատ օտար և ի թիւս նոցա հայկական բառեր: Ուրիշինը իւրացնել, մշակել և իւրը դարձնել, այդ միայն ցոյց է տալիս լեզուի կենսունակութիւնը: Վրաց լեզուն նոյնպէս որոշ ազդեցութիւն է արել հայոց լեզուի վրայ, և հայերը, որչափ մենք նրանց ճանաչում ենք, շատ երախտապարտ կը

լինին, եթէ մի որեւէ վրացի բացատրէ այդ ազդեցութեան չափը: Իրենք հայերը ամենեւին չեն աշխատում թազցնել այդ փաստը. Վենետիկի Մխիթարեանները մեծ հաճոյքով ցոյց են տալիս իրենց հիմնաւոր բառարանի մէջ վրացական ծագումն ունեցող բառերը, ի հարկէ, եթէ միայն այդ բառերը յայտնի են նրանց:

Վերջապէս եւրոպական ոչ մի գիտնական և ոչ իսկ ֆրանսիական հանգուցեալ արեւելագէտ Gatteyras-ը, որ չգիտեմ ինչու Ակակիի յօդուածի մէջ հայկական հեղինակութիւն է անուանուած, — այդպիսի մի յանդուգն միտք չին արտայայտել, իբր թէ առանց վրաց լեզուի անկարելի է ուսումնասիրել հայոց լեզուն: Հայագէտների մեծ մասը երբէք չէ իմացել և այժմ իսկ չգիտէ վրաց լեզուն: Միւս կողմից վրաց լեզուի գիտութիւնը Gatteyras ին օգնեց յառաջադի մութիւն գործել հայ լեզուում, որնա գիտէր բաւական վայր ի վերոյ, ինչպէս այդ երևում է նրա թարգմանութիւններից: Խնդիրը, ի հարկէ, հայոց լեզուն իւրացնելու մէջ չէ, այլ նրա լեզուագիտական նշանակութեան մէջ. այդ պատճառով էլ Gatteyras-ը ուշադրութիւն էր դարձնում վրաց լեզուի վրայ *)

*) L'Arménie et les Arméniens par I. A. Gatteyras, Paris, 1883, երես 14): Ի դէպ Gatteyras-ի այդ աշխատութիւնը ըստ էութեան իբրեւ մի նորութիւն չընդունուեց իսկ իր ժամանակին. բայց ով որ կատարելապէս հասկացողութիւն չունի Հայաստանի անցեալի մասին, այդպիսիներին կարելի է առաջարկել այդ գիրքն այժմ ևս, նախազգուշացնելով որ հեղինակը միայն Դիւօրիէի եռանդազին աշակերտն է և 109 փոքրագիր երեսների վրայ ծանօթացնում է հայոց սոսկական աւանդական պատմութեան հետ ab ovo, մինչև Կիլիկիոյ թագաւորութեան անկումը:

բայց թէ ինչ յարաբերութիւն էր նկատում նա հայերէն և վրացերէն լեզուների մէջ, դա մի գաղտնիք է՝ որ նա իր հետ գերեզման տարաւ: Չտապում ենք աւելացնել, որ մենք անձնագէտ, մեր լեզուագիտական աշխատանքների մէջ նոյնպէս հասել ենք այն մտքին թէ վրաց լեզուն առաջնակարգ նշանակութիւն ունի հայ լեզուի պատմութիւնը պարզաբանելու համար: Բայց դա զուտ գիտական խնդիր է և հայերն արդէն վարժուել են այդպիսի հարցերը գանազանել ազգային հարցերից, և նրանց համար, ըստ էութեան, մինեւնոյն է թէ ինչ վճիռ կըստանայ այդ հարցը, միայն թէ նա համաձայն լինի գիտութեան և ճշմարտութեան:

6) Իբր ապացոյց (իւրեանց անարդար ոտնձգութեանց) նրանք (հայերը) մատնացոյց են անում վրաց տաճարները և վանքերը, որոնց վրայից քերել են վրաց լեզուով արձանագրութիւնները և փոխարէն «Գաւիթներին» և «Բագրատներին» «փորագրել են «Արշակներ» և «Մարշակներ» (երես 37):

Եթէ Ակակին մի աւելորդ անգամ ևս ցանկանալ յիշեցնել արդէն շատ լրագրների սխնանքներից անցած քիչ հաւանական լուրը թէ մի որեւէ հայ բարբարոսաբար է վարուել վրաց արձանագրութեան հետ, դրա դէմ մենք հակաճառելու ոչինչ չէինք ունենալ: Ի հարկէ, իւրաքանչիւր մարդ անկեղծօրէն կըցաւակցէ որ մէկն ու մէկը տգիտութեամբ փշագրել է վրացերէն արձանագրութիւնը, եթէ միայն, կրկնում ենք, այդ լուրը մտացածին չէ. իսկ հայերը կրկնակի կըվշտանան, եթէ այդ սրիկան իրենց ցեղակիցն եղել: Մակայն վերոյգրեալ բոլոր տողերի թոյնը

նրա մէջն է որ Ակակին առանձնակի և ստուգութեան կարօտ միակ փաստը ընդհանրացնում է և բոլոր հայերին ներկայացնում է իբրև բարբարոսներ, որոնք գիտակցաբար քերում են վրացերէն արձանագրութիւնները և կեղծիքներ են կատարում: Բայց այդ տեղեկութիւնը ակնյայտնի կերպով հակասում է իրականութեան: 25-րդ, երբ մեղադրում են հայերին իբրև այդպիսի անարգ գործ կատարողների, ի նկատի չունին հայ հասարակ ժողովուրդը, որին և դատապարտելը ամենամեծ անարդարութիւնը կըլինէր—հայ հասարակ ժողովուրդը երբ քարի վրայ արձանագրութիւն է նկատում, այդ քարին վերաբերում է շեմեռանդութեամբ իբրև սրբութեան, ինչ լեզուով էլ լինի այդ արձանագրութիւնը: Մենք անձնագէտ շատ անգամ վկայ ենք եղել այդ տեսակ վերաբերութեան: Իսկ հայկական ինտելիգենցիայի մէջ, որ հասարակութեան աղն է և նրա ղեկավարը, դէպի օտարի և իր հնութիւնները եղած յարգանքը նրա ամենահամակրելի յատկութիւններից մէկն է, նոյն իսկ այն ազատամիտ մասի մէջ, որ շարունակ պառակտումն է պահանջում անցեալից և որ ըստ երևութին ամենից աւելի քիչ պիտի հետաքրքրուի հնագիտական խնդիրներով: Եւ միթէ կարելի է ուրիշ վերաբերութիւն սպասել, երբ հայկական կրթութեամբ հասարակութեան մէջ լեզուագիտութիւնն արդէն հարիւրաւոր ներկայացուցիչներ ունի, որոնց մեծամասնութիւնը եռանդազին լսել են թէ ուսու և թէ մանաւանդ գերմանացի պատմաբաններին, ցեղագէտներին, լեզուագէտներին կայլն կայլն: Բայց գերմանական լեզուագիտական գիտութիւնից անկախ, հայերը

վաղուց արդէն յարգանք են ցոյց տուել դէպ արձանագրութիւնները և ոչ միայն դէպ իրենցը, այլ և դէպի օտարինը: Հայ վարդապետները խնամքով ժողովում էին վրաց արձանագրութիւնները և մինչև անգամ տպագրում և աւելի կանուխ, երբ դեռ վրացիները լուրջ ուշադրութիւն չէին դարձրել իրենց արձանագրութեանց վրայ: Վրաց արձանագրութիւններին հայերի կողմից այդպիսի սիրով վերաբերուելու մասին վրացիք կարող էին տեղեկանալ գոնէ Գիտութեանց ձեմարանի հրատարակութիւններից, օրինակ — Incriptions géorgiens etc. recueillies par le Père Nersés Sargisiiian*) et expliquées par M. Brosset St Pétersbourg, 1864: Այդպիսի վերաբերութիւն նկատել ենք մենք անձամբ: Ռուսական հայաստանում կատարած մեր հնագիտական ճանապարհորդութեանց միջոցին մենք տեսել ենք վրաց արձանագրութիւններ բացառապէս հայաբնակ տեղերում և մէկն, ի միջի այլոց, Գօշ գիւղում, այսինքն գրեթէ էջմիածնի թևի տակ և թէ տեղական և թէ մեզ ուղեկցող հայերի մէջ մենք նկատում էինք ոչ թէ ցատումն վրաց հայաստանում ժամանակաւորապէս տիրապետութեան յիշատակների դէմ, այլ կատարելապէս խելացի հետաքրքրութիւն: Աղբրանդրապօլի գաւառում, բաց դաշտի մէջ գտնուեց քարէ խաչի մի բնկոր վրացերէն հետաքրքրական արձանագրութեամբ, որ հետաքրքրական էր իսկ իր գտնուած տեղով և այդ քարը խնամքով վերցնողը և գիտու-



*) ձանապարհորդել է հայաստանում 1843—53 թուականներին:

թեան համար փրկուլը մի հայ էր: Այդ մենք տեսանք մեր աչքերով: Բայց բաւական է!: Այստեղ հօ չենք գրում վրաց արձանագրութեանց հայերի մատուցած ծառայութիւնը: Միայն պէտք էր ցոյց տալ թէ հայկական գիտնական շրջանում, աղգային գիտակցութեան զարգացման աստիճանի յայտարար այդ շրջանում, ինչպէս և հայ ինտելիգենցիայի մէջ տիրապետում է ոչ միայն համբերատարութիւն, այլ և սիրալիր ուշադրութիւն դէպի վրաց աղգեցութիւնը հին հայկական կեանքի վրայ: Ի միջի այլոց ոչ թէ վրացի, այլ հայ գիտնական հ. Բ. Տաշեանը ըստ կարեաց լուսաբանել է այն կարևոր դերը, որ խաղացել է հայոց գրականութեան մէջ միջին դարերում ահագին նշանակութիւն ունեցած յոյն պատմագիր Պրօկղէսի մի փրկստփայական երկի վրացերէն ընագիրը:

Այսչափս արդէն բաւական է:

14 յունվարի 1898 թ.

Ս. Պետերբուրգ:



0000216

4150

0

120 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0000216

